ՈՒՇԻԻ Ս. ՍԱՐԳԻՍ ՎԱՆՔԻ ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռ. Ռ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ուշիի ս. Սարգիս վանքը միջնադարյան Հայաստանի Արագածոտն գավառի հոգևոր նշանավոր կենտրոններից է։ Այն գտնվում է Արագած լեռան հարավ-արևելյան ստորոտին, դեղատեսիլ վայրում, Աշտարակի շրջանի համանուն գյուղից 1,5 կմ արևմուտք։ Վանապան համալիրը կառուցված է կիկլոպյան ամրոցի հարևանությամբ՝ բլրի հարավային լանջին[1]։ Այն բաղկացած է երկու եկեղեցուց, գավթից ու բնակելի տների մնացորդներից, որոնք շրջապատված են կիսաբոլոր աշտարակներ ունեցող պարիսպներով։ Հնագույն շինությունը, որը միանավ, թաղածածկ, երկթեք տանիքով, փոքր չափերի եկեղեցի է, կառուցված է համալիրի հյուսիսային մասում։ Եկեղեցու սրբատաշ պատերը բարձրանում են կրաշաղախ, կուլտատաշ քարերով հիմքի վրա։ Ավագ խորանի կամարակապ փոքր դուռը բացվում է դեպի հյուսիսային կողմի ավանդատունը, որը ներկայումս ամբողջովին խոնարհված է։ Տեղում պահպանված ծածկի երկու կիսակլոր և շեղանկյուն քարերը ենթադրել են տալիս, որ ավանդատունը ունեցել է հովհարաձև ծածկ։ Քանդակազարդ որմնասյուների ու քիվերի քարերը վկայում են տաճարի բարձրարվեստ գեղագիտական հարդարման մասին։ Եկեղեցու մուտքը արևմտյան կողմից է։ Շինության երեք կողմերը վատ են պահպանվել։ Արևմտյան ճակատին ընդգծված երևում են վերանորոգման հետքեր։ Մուտքի միակտուր բարավորին փորագրված է միաբանության առաջնորդ Հովհաննեսի վիմագիրը, որ գրեթե ամբողջովին հողմահարված է։

Համալիրի մյուս շինությունը հարավային կողմից կից է նախորդին։ Ինչպես վկայում է Հովհ. Շահխաթունյանցը, վանքի այս կառույցը Մեծին մեծության, անսյուն կենտրոնագմբեթ եկեղեցի է եղել, որն ավերվել է 1327 թ. երկրաշարժից. «Մեծին տաճարն միջակ մեծությամբ, առանց սեան ունէր կաթողիկէ վայելչաձև, այլ յամին 1827, անկաւ կործանվեցաւ յերկրաշարժութենէ, նոյնպէս և տանիքն հանդերձ արևմտեան որմովն բոլորովիմբ և աւանդեն ականատեսքն թէ գերեզման սուրբ Սարգսի էր յայսմիկ՝ տաճարի և այժմ ծածկեալ ընդ փլածովքն»[3]։ Ներկայումս այն ամբողջովին ավերված է։ Նկատելի են արևելյան որմի լիցքը՝ մոտ 2 մ բարձրությամբ, ավագ խորանի կիսաշրջանաձև շարվածքը։ Շինությունից պահպանվել են նաև առանձին մանրամասներ՝ մեծածավալ թմբուկի մի մասը, քանդակազարդ քիվի մնացորդները, պտղազարդ մոտիվներով հարդարված բաղմաթիվ բեկորներ[4]։

---

1 Ամրոցը զբաղեցնում է բլրի ողջ գագաթը։ Այն ընդգրկում է մոտ 5 հա տարածք։ Պարիսպների բարձրությունը տեղ-տեղ գերազանցում է 3—5 մ-ը։ Ամրոցի տարածքում պահպանվել են բնակելի կառույցների ավերակները։

2 Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրութեամբ Յովհաննու եպիսկոպոսի Շահխաթունեանցի (այսուհետև՝ Հովհ. Շահխաթունյանց), հ. Բ, էջմիածին, 1842, էջ 118։

3 1827 թ. երկրաշարժից հետո այս շինության զգալի մասը պահպանված է եղել. «Կամարայարկն միակ սեղանոյ այսր տաճարի հանդերձ արևելեան որմովն գտանի ի կանգուն» (նույն տեղում)։

4 Նույն տեղում, էջ 118։

Կաթողիկեի մուտքը, ըստ Շահխաթունյանցի, հարավային կողմից էր և ճակատակալ քարին եղել է 1329 թ. արձանագրություն[5]։

Դավիթը կաթողիկե եկեղեցու հարավային կողմում է, նրա ներքին տարածությունը լուծված է խաչաձև կամարների միջոցով։ Այս տիպը խիստ բնորոշ է XIII—XIV դդ. ճարտարապետական մի շարք կառույցների (Հաղպատի սեղանատուն, Հազարծին, Խորակերտ, Նեղուց, Խորանաշատ)[6]։ Մուտքի եռակտոր բարավորին փորագրված է կաթողիկե եկեղեցու նորոգման արձանագրությունը, որի հյուսիսային կողմում պահպանվել են միակտուր քարերից երկու գեղաքանդակ խաչքարեր՝ բնորոշ XIII—XIV դդ.։ Ներքուստ գավթի արևելյան կամարաձև բացվածքի հյուսիսային կողմում պահպանվել են երկու արձանագիր խաչեր՝ հենված արևելյան որմին։ Վիմագրեր պահպանվել են դավթի այլևայլ հատվածներում։

Ինչպես նշեցինք, հուշարձանախումբը շրջապատված է պարսպով, որն ունի կիսաբոլոր աշտարակներ։ Այն կառուցված է կոպտատաշ քարերով։ Լայնությունը 3,5 մ է, իսկ բարձրությունը տեղ-տեղ հասնում է 5 մ-ի։ Պատմիչ Առաքել Դավրիժեցու վկայությամբ, պարիսպը 1654 թ. կառուցել է միաբանության առաջնորդ Ոսկան վարդապետ Երևանցին. «Իսկ Ոսկան վարդապետս թէպէտ ոչ կարաց նորոգել զտանիքն եկեղեցեացն, զի ոչ ունէր այնքան դոյս, այլ մեծաւ տաժանմամբ և բազում աշխատութեամբ պեղեաց զշորս կողմն եկեղեցւոյն, և պատեաց շուրջանակի պարիսպ յոյժ ամուր, և ի մէջ պարիսպն շինեաց ըստ պատշաճին տնէր»[7]։ Պարսպի հարավային երկու կիսաբոլոր աշտարակների միջև պահպանվել են քառանկյուն հիմքով՝ իրարից հեռու երկու կառույցներ, որտեղ ակներևաբար եղել է պարսպի մուտքը, որն այսօր խոնարհված է։

Վանքի գլխավոր կառույցներից հարավ առկա են միաբանության բազմաթիվ շինությունների ավերակներ, որոնք շարված են բազալտե ճեղքված քարերով և հողի շաղախով։ Գերեզմանոցը տարածվում է համակառույցի հյուսիսային բլրալանջի թեքության վրա։ Այստեղ կան բազմաթիվ հարթ և երկլանջ տապանաքարեր և խաչքարերի սրբատաշ պատվանդաններ։ Խաչքարերը չեն պահպանվել, սակայն, դատելով տապանաքարերի և խաչքարերի բեկորների հորինվածքներից, դրանք հավանաբար համաժամանակյա են վանական գլխավոր կառույցներին։

Ուշիի մասին հնագույն վկայությունը վերաբերում է V դ.։ «Հայսմավուրքում» պահպանված ավանդության համաձայն, Մեսրոպ Մաշտոցը Պարսկաստանից Հայաստան է բերում ս. Սարգիս զորավարի նշխարները և թաղում Ուշիում, ապա դամբանի վրա կառուցում է համանուն վանքը. «Եկեալ անդր մեծ վարդապետն հայոց սուրբն Մեսրոպ. եբարձ զմարմին սրբոյն Սարգսի և տարաւ ի Կարբի. և եդ պատուով ի Յուշի. և արար զտեղին վանք հռչակաւոր որ է մինչև ցայսօր»[8]։ Այսպիսով, սրբատեղը եղել է Կարբիի մերձակա հոգևոր վայրերից մեկը։

XIII դ. սկզբին Զաքարյան իշխանները հայ-վրացական միացյալ ուժերի զինակցությամբ սելջուկներից ազատագրում են ամբողջ Արագածոտնը՝ Ամբերդով։ Այդ առիթով Զաքարե Ամիրսպասալարը 1200 թ. խաչքար է կանգնեցնում. «Ի ՈԽԹ (1200—Ռ. Գ.) թուականութիւնս ես Զաքարէ Ամիրսպասայարս հայոց և վրաց, որդի մեծին Սարգսի, առի զանառիկ ամրոցս Ամբերդոյ յախնայծին որոյն Հաքարու...»*։ Զաքարյանները նոր ազատագրված Ամբերդը և ամբողջ Արագածոտնը, ինչպես վկայում է Զաքարիա Սարկավագը, տալիս են իրենց հավատարիմ իշխաններից մեկին՝ Վաչուտյան Վա-

---

5 Նույն տեղում։

6 С. Х. Мнацаканян, Архитектура армянских притворов, Ереван, 1952, с. 59.

7 Պատմութիւն Առաքելի վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ 351։

8 Յայսմաւուրք, Կոստանդնուպօլիս, 1706, էջ 490։

* Տե՛ս Ե. Տեր-Մինասյան, Ամբերդաձորի հնությունները և արձանագրությունները (Էջմիածին, 1961, Ե, էջ 45—54)։

յեին. «Այս Սարգիս տեւեաց մինչև ցվերջին Զաքարիա և ծնաւ նա որդի մի և անուանեցաւ Վաչէ, որ սիրեցաւ ի Զաքարէէ, և եղև հաւատարիմ տան նորա· Եւ վասն միամիտ ծառայութեան իւրոյ կարգեաց զնա իշխանաց իշխան և ետ նմա մեծութիւն և իշխանութիւն ամենայն Արագածոտնն Շիրակայ, Նիգայ, Աներեղու և ամենայն եզերաց՝ մինչև ցերասխաձոր»[9]։ Զաքարյանները այնուհետև կառուցում են դպրության կենտրոններ. «Եւ զոր երկիր և էառ շինեաց անդ եկեղեցի, մանաւանդ յեզերեն Արագածու, նախ զՅՕՀաննու վանք, զՀառիճու վանք, զՏեղերու վանք, զՅուշոյ վանք, զՍաղմոսավանք»[10]։ Զաքարիա Քանաքեռցու վկայությունները ունեն աղբյուրագիտական հավաստիություն, սակայն զուրկ են ականատեսի դիտողական մանրամասներից։

Հաջորդ տեղեկությունը վերաբերում է ԺԴ դարին։ 1310 թ. Սարկավագ գրիչի կողմից Հովհաննավանքում ընդօրինակված Ավետարանում վկայված է Ուշիի վանքի առաջնորդ. «զվարդապետ Պետրոս Ուշոյ վանացն, որ առաջնորդ և կատարումն եղև. բանիս... գրեցաւ սուրբ Աւետարանս հրամանաւ և արդ(ե)ամբք ամենաւրհնեալ Մամախաթունին և ընծայեցաւ Ուշոյ սուրբ զաւրավարին Սարգսի, մի ոք իշխեսցէ հանել և հեռացուցանել ի վկայարանէ սուրբ զաւրավարին...»[11]։ Մի այլ ձեռագիր հիշատակարանում՝ ընդօրինակված 1443 թ. Ուշիի վանքում, Կարապետ աբեղայի կողմից, վկայվում են Հովհաննես փակակալը և հայր Բարսեղը, սրանց սպասավոր Մովսեսը. «Սրբոյ Սարգսի զաւրավարիս՝ Յովաննէս փակակալ սուրբ տաճարիս, Բարսեղ բնական հայր, և Մովսէս եղբայր հեզահոգի և սպասաւոր սոցին»[12]։

Ուշիի ս. Սարգիս վանքի մասին հիշատակված է նաև Զաքարիա Ագուլեցու «Օրագրության» էջերում։ 1672 թ. հուլիսի 14-ին էջմիածնում Հակոբ կաթողիկոսի հրավիրած վեհաժողովի մասնակիցներից է եղել Զաքարիան, որն այցելել է մի շարք վանքեր (Օշական, Հովհաննավանք, Սողմոսավանք), ի թիվս որոնց նաև ս. Սարգիս վանքը[13]։ Ագուլեցու վկայությամբ վանքի տեղապահն է եղել Պողոս Երևանցին, որը փոխարինում էր Ոսկան Երևանցուն[14]։ Վերջինս տպագրական լայն գործունեություն էր ծավալել Ամստերդամում, հայկական տպարանում, որը կոչվում էր «ս. Էջմիածնի և ս. Սարգսի անվան», և ստացվող եկամուտը պետք է բաժանվեր Էջմիածնի, Երուսաղեմի և Ուշիի վանքերին[15]։

Սիմեոն կաթողիկոս Երևանցին, «Ջամբռի» էջերում թվարկելով Էջմիածնի վիճակին ենթակա հարկատու վանքերը, նշում է նաև Ուշիի վանքը և նրա հասութաբեր հաստատությունները (այգի, ջրաղաց, ձիթհանք)[16]։

Հայաստանի բազմաթիվ վանական հաստատությունների մասին խոսելիս Աբել արքեպիսկոպոս Մխիթարյանցը նշում է նաև Ուշիի ս. Սարգիս վանքը և սրա կառուցողն է համարում Ներսես Գ Շինարար կաթողիկոսին[17]։ Ներսես Գ Տայեցին (641—661), որ հաջորդել է Եզր Ա-ին, ղեկավարել է Զվարթնոցի շինարարությունը, կատարել նորոգումներ Դվինում (ս. Սարգիս), Վաղարշապատում (ս. Աստվածածին), Վասպուրականում (Զորու

---

9 Պատմագրութիւն Զաքարեայ Սարկաւագի, հ. 3, Վաղարշապատ, 1870, էջ 12։

10 Նույն տեղում, էջ 12։

11 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյանը, Երևան, 1950, էջ 65—66։

12 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս Առաջին (1401—1450), կազմեց Լ. Ս. Խաչիկյանը, Երևան, 1955, էջ 550։

13 Զաքարիա Ագուլեցի, Օրագրություն, Երևան, 1938, էջ 108։

14 Նույն տեղում, էջ 108։

15 Ռ. Ա. Իշխանյան, Հայ գիրքը 1512—1920, Երևան, 1981, էջ 59։

16 Սիմէոն կաթողիկոսէ, Ջամբռ, Վաղարշապատ, 1837, էջ 141—144։

17 «Ուշոյ սուրբ Սարգիս յԱրագածոտն, ի Շինող կոչեցեալ ի Ներսէս կաթողիկոսէ, նորոգեալ յԱւագ Սարգսէ 1262...» [Աբէլ արքեպիսկոպոս Մխիթարեանց, Պատմական ժամանակագրութիւն (Արարատ, թիւ Ժ, տարի Զ, 1873, էջ 366)]։

վանք)։ Շինարար մականունը նա ստացել է շինարարական եռանդուն գործունեության շնորհիվ։ Թե ինչ աղբյուրից է օգտվել Արել արքեպիսկոպոսը, մեզ հայտնի չէ։ Պարզ չէ նաև, թե ինչպիսի կառույցներ է հիմնադրել կամ ինչ նորոգումներ է իրագործել ներսես Դ Շինարարը ս. Սարգսի վանքում։ Կարծում ենք, Աբել Մխիթարյանցը այն շփոթել է Դվինի ս. Սարգիս վանքի հետ[18]։

Ուշիի վանքի կառույցների որմերին պահպանված վիմագրերը առաջինն ընդօրինակել է Հովհ. Շահխաթունյանցը։ Նա վերծանել է երեք հիշատակություն։ Դրանցից առաջինը փորագրված է եղել կաթողիկե եկեղեցու հարավային մուտքին (ներկայումս խոնարհված)։ Այն փորագրվել է 1329 թ.։ Շահխաթունյանցը հրապարակել է վիմագրի սկիզբը՝ «ԹՎ ՉՀԸ կամաւն անմահին Աստծոյ ողորմութեամբ պարոն Քրդին, և Խուտ...»[19]։ Հաջորդ արձանագրությունն ինը տողից է, որ փորագրված է գավթի հարավային որմին՝ ներսից, թերընթերցված է։ Հրատարակողը վերծանել է վիմագրի առաջին չորս տողերը «ԹՎ ՉՀԸ կամաւ անմահին Աստծոյ և ողորմութեամբ պարոն Քուրդին և Խուտ խաթունին, ես Հոռովմ Էրեց որդի Մաւրեհամայ և ամուսին իմ Ուլու Խաթուն միարանեցաք սուրբ զաւրավարին տուաք մեր հազարմանի այգին...»[20]։ Հետագայում այս արձանագրությունը տեղ է գտել Ղեոնդ Ալիշանի «Այրարատում»[21]։ Մեծանուն հայագետը, օգտվելով Շահխաթունյանցի ընդօրինակություններից, քննական մոտեցում է ցուցաբերել դրանց վերծանության նկատմամբ։ Ալիշանը թեական է համարել Վաչուտյան Քուրդ Անբերդցու կնոջ՝ Խուանդ խաթունի (վիմագրում՝ Խուտ խաթուն) և նվիրատու Հոռովմ երեցի հայրանվան (վիմագրում՝ Մաւրեհամայ) անձնանունների ընթերցումը։

Վերը նշված արձանագրությունները տեղ են գտել Կ. Կոստանյանի «Վիմական տարեգրում»։ Հեղինակը Հոռովմ երեցի հայրանունը տարանջատել է երկու առանձին բաղադրիչների (Մաւր եւ Համայ)[22], մի բան որ անընդունելի է, քանի որ այլուր չի հանդիպում։ Ահա բնագրի ընթերցումը մեր վերծանությամբ. «ԹՎԻՆ ՉՀԸ (1329) ԿԱՄԱՒԻՆ ԱՆՄԱՀԻՆ Ա/ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԵ ՊԱՐՈՆ ՔՐԴԻՆ ԵՒ Խ[ՈՒԱՆՏ] ԽԱԹՈՒՆԻՆ, ԵՍ/ ՀՈՌՈՎՄ ԵՐԵՑ, ՈՐԴԻ ԱԲՐԵՀԱՄԱՅ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՈՒԼՈՒ ԽԱԹՈՒՆ ՄԻԱՅԲԱՆԵՑԱՔ ՍԲ/ ԶԱՒՐԱՅԱՎԱՐԻՍ, ՏՎԱՔ ՄԵՐ ՀԱՋԱՐՄԱՆԻ ԱՅԳԻՆ, ՈՐ ՆՈՐՔ ԷՐ ԴՐԱՍ Ի/ԶԱՐԵՈՅ ԱՌՎԻ ՀՈՂԸ, ԵՒ ՎԱՌ ՆԱՓՈՐՏ ՎԱՍՆ ՓՐԿՈՒԹԵ ՀՈԳՈՅ ՄԵՐ ԱՐԵՒՇԱՏՈՒԹԵ ՊԱՐՈՆ ՔՐԹԻՆ, ԽՈՒԱՆՏ ԽԱԹՈՒՆԻՆ, ԵՒ ԶՈՔՆԻՆ, ԵՒ ՍՊԱՍԱՒՈՐՔՍ ԽՈՍՏԱՅԱՆ Ի ՏԱՐԻՆ։Դ։/ՊԱՏԱՐԱԳ ԱՒԱԳ Ե ՇԱԲԱԹԻՆ՝ Ա ՔՐԹԻՆ, Ա ԽՈՒԱՆՏ ԽԱԹՈՒՆԻՆ, Ա ՀՈՌՈՄ ԻՐ/ԻՅԻՆ, Ա ՈՒԼՈՒ ԽԱԹՈՒՆԻՆ ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ ԱՅ ԽԱՓԱՆԻՉՆ/ԶԻՒՐՆ ԳՏԱՆԷ։ /ԶՈՒՍՏՍ ՅԻՇԵՑԵՔ»։ Ս. Ավագյանը, քննելով վիմական արձանագրությունների հնչյունաբանական առանձնահատկությունները՝ այս բնագրից բերել է մի հատված. «Ա շաբաթ աւր Քրթին (Քուրդ) նշելով Թ/Դ հերթագայությունը»[23]։ Արձանագրությունը իր բովանդակությամբ նվիրատվական է։ Վկայագրի համաձայն 1329 թ. Հոռովմ (կամ Հոռոմ)[24] երեցը կնոջ՝ Ուլու խաթունի հետ ս. Զորավարին նվիրել է Զարեհ առվի մերձակա հողը։ Նվիրատուները վանքին շնորհել են նաև եկեղե-

---

18 «...Զվկայարանաս ս. Սարգսի ի Դուին, և զքաւարան Վիրապին Արտաշատ քաղաքին» (տե՛ս Պատմութիւն հայոց, Սամուէլի Քահանայի Անեցւոյ, Վաղարշապատ, 1893, էջ 83)։

19 Հովհ. Շահխաթունյանց, էջ 119։

20 Նույն տեղում, էջ 119։

21 Ղ. Ալիշան, Այրարատ բնաշխարհիկ Հայաստանեաց, Վենետիկ, 1890, էջ 181։

22 Կ. Կոստանեանց, Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 164։

23 Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն, Երևան, 1973, էջ 267։

24 Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երևան, 1946, էջ 95։

ցական հագուստ՝ վառ նափորտ, որի դիմաց միաբանները խոստացել են չարաչարտարագ։ Եկեղեցական հանդերձանքը բնորոշող վառ-ը նոր բառգիրք հայկազեան լեզուի բառարանում բացատրվում է որպես «զարդ թագաւորական և դշխոյական, դրօշ, քող, վերարկու ազնիւ, բեհեզ, դիպակ բարակ և ասեղնագործ կամ մետաքսեայ պաստառ շքեղ, որպէս խաչվառ»[25]։ Այս տերմինը քանիցս վկայված է ԺԴ դարերի վիմական արձանագրություններում։ Նափորտը՝ Ստ. Մալխասյանցի «հոգևորականի վերնաշապիկ, որ կրում են եմիփորի տակ, նաև շուշառ, վերարկու»[26]։

Քննվող վկայագրում Հովհ. Շահխաթունյանցը ճիշտ չի ընթերցել Հոռոմ երեցի հայրանունը, ուստի նույն սխալը սպրդել է Հր. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանը»[28]։ Վիմագրում փորագրված է «ԱԲՐՕՇԱՆՑ» ձևը։ Շահխաթունյանցը, ինչպես տեսանք, ընթերցել է «Մաւրեւհամայ»։ Բնագրում ընդգծված երևում է Ա տառի երկրորդ ուղղահայաց մասնիկի վերին մասում Բ-ի կիսաբոլոր գլխիկը, որը սոտեանում է հորիզոնական մասնիկին։ Ուստի, կցագիրը պետք է կարդալ ոչ թե ԱԲ (Սաւր), այլ Ա (Աբր)։ Իսկ բառամիջի Ե-ն, որ փորագրված է Ա-ի փոխարեն, բարբառային երևույթ է, որ խորթ չէ տվյալ ժամանակաշրջանի հայերենին[29]։

Վիմագրում հիշատակված են Արագածոտն գավառի տեր, Վաշուտյան իշխանական տան ներկայացուցիչներ Խուրդ Բ Աբերդեցին (XIII դ. վերջ—1340) ու նրա կինը՝ Խուանդ խաթուն իշխանուհին։ Վերջինիս անունը Շահխաթունյանցը կարդացել է «Խուբ խաթուն» ձևով, որն Ալիշանը թեպական է համարել։ Այժմ վիմագրի այդ մասը եղծված է, սակայն վեցերորդ տողում փորագրված է «Խուանա խաթուն» ձևով[30]։ Հիշատակված է նաև նրանց որդին՝ Թեոդորոսը, Զրքին մականունով (1335—1350)։ Այս իշխանները քանիցս հիշատակված են Արագածոտնի և Վարաժնունիքի հուշարձանների որմերին փորագրված արձանագրություններում (Հովհաննավանք, Կարբի, Բջնի և այլն)։ Քննվող արձանագրությունը ավարտվում է անեծքի բանաձևով, որից հետո առանձին տողի վրա փորագրված է երկու բառ. «ՉԱՒԻՍՏ ՅԻՇԵՑԵՔ»։ Մեր համոզմամբ այստեղ վկայված է XIV դ. մինչև այսօր անհայտ փորագրող վարպետի անունը։

Հովհ. Շահխաթունյանցի հրատարակած մյուս արձանագրությունը փորագրված է գավթի շքամուտքի բարավորին։ Այն ունի շինարարական բովանդակություն։ Թեև այն հիմնականում ճիշտ է ընդօրինակված, սակայն ունենք մի փոքր ուղղում։ Բերենք սեր վերծանությունը. «ԱՅ ՈՒՐՄՈՒԹԵԱՄԲՆ ՍՐԲ/ՍԱՐԳԻՍ ԶԱՒՐԱՒԱՐԻՍ ԱՒԳՆՈՒԹԵԱՄԲՆ/ԱՇԽԱՐՀԱՅԿԱԼՈՒԹԵԱՆ ԱՅԼՂԱՆԱՅՆ/ՏԵՐՈՒԹԵԱՆ ՏԵՂԻՈՅՍ ԱՒԱԳ ՍԱՐԳԻՍ ՇԻՆԵՑԱՒ ՀԱՍՏԱՏԱՅՄԵՍ ՏԱՃԱՐՍ ԱՅ Ի ԿԱՆԳՆՈՒՄՆ/ԽԱԽՏԵԼ ԷԿԵՂԵՑՈՒՍ ԶՈՐ ՀԱՐԺԵԼ Ի ՔՒՄՆԱՅ/Ի ՏՐ ՅՈ ՀԱՆ ԻՍԷ Ի ՀԱԼԱԼ ԸՆԶԻՑ ԻՒՈՐՅ ՈՐՈՒՄ/ՈՂՈՐՄԵԱՅ Ի ՆՄԱՅ ՔՍ ՏԱՅԷ Ի ԼՈՒՍԵՂԷՆ ՅԱՐԿԱ/ՅՆ ԵՒ ՏՐ ՀԱՄԱԶԱՍԳԱՅ, ՈՐՔ ԱՇԽԱՏԵԼՔ ԵՆ Ի ՍՄԱ/ԶԱՄԱՅՆ ՄԻԱԲԱՆՔ ՍԲ ՈՒԽՏԻՍ ՅԻՇԵՑԷՔ Ի ՏՐ. Ի ԹՎԻՍ. ՉԺԳ. (1264)։

Շահխաթունյանցը 4—5-րդ տողերում կարդացել է «շինեցաւ հաստատ մեծ տաճարս» բառակապակցությունը, անտեսելով հ ա ս տ ա ց բառի վրա փորագրված «ՍՏ» տառերը, որոնցով ստացվում է «հաստատաց մեծ տաճարս» իմաստը։ Վիմագրում վկայված Ավագ Սարգիսը Զաքարե Ամիրսպասալարի թոռն էր, Շահնշահի որդին։ Նրա անվան հիշատակումը վիմագրում, հավանաբար, հաստատում է այն իրողությունը, որ տեղական կողմնակալ

25 Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ, Երևան, 1981, էջ 784։

26 Դիվան հայ վիմագրության, պր. 1, Երևան, 1966, էջ 35։

27 Ստ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց, Հայերենի բացատրական բառարան, հ. 3, Երևան, 1946, էջ 95։

28 Հր. Ա ճ ա ռ յ ա ն, նշվ. աշխ., էջ 95։

29 Այս երևույթի մասին տե՛ս Ս. Ա վ ա գ յ ա ն, նշվ. աշխ., էջ 94։

30 Խուանտ խաթուն իշխանուհու անունը գրված է նաև «Խոյան խաթուն» ձևով (տե՛ս Գ. Ա լ ի շ ա ն, Հայապատում, Վենետիկ 1901, էջ 527։

իշխանները նվիրատվություններ կամ շինարարություն իրականացնելու հասար պետք է ունենային սյուզերեն իշխանի թույլտվությունը[31]։ Մյուս հանդամանքն այն է, որ վիմագրում ասված է՝ Ուշին եղել է Ավագ Սարգսի ժառանգական կալվածքը այնպես, ինչպես Փարպին՝ Աղբուղայինը՝ Իվանեի որդունը[32]։ Արտոնագրում նշված տր Հովհաննեսը և տր Համազասպը Հովհաննավանքի առաջնորդներն են, Համազասպը՝ եպիսկոպոս Համազասպ Սամիկոնյանն է[33]։

Գավթի արևելյան պատին, ներքուստ, ագուցված են երկու խաչքարեր, որոնցից հարավայինը փոքր չափերի է և դրված է պատվանդանի վրա։ Չափերն են՝ 83×63×23, պատվանդանինը՝ 60×72։ Պատվանդանին փորագրված է հինգ տող արձանագրություն, որ հրապարակվում է առաջին անգամ. «ՇՆՈՐԻՒՆ ՔԻ, ԵՍ ՏԻԿՆԱՅ/Ս ԿԱՆԳՆԵՑԻ ՁԽԱՉՍ ՓՐ/ԿՈՒԹՅԱՆ ՀՈԳՈ ԽԱ-ՉԱՏՐՈ/ԵՒ ՍԹԷԻ ՄԱՒՐՆ ԵՒ ԳՐԻԳՈՐՈ/ՈՐՔ ԿԱՐԴԷՔ ՅԻՇԵՑԵՔ/Ի ՔՍ»։ Տառաձևերից, ինչպես նաև խաչքարի քանդակներից դատելով՝ այն կարելի է թվագրել XIII—XIV դդ.։ Երկրորդ խաչքարը նախորդի կողքին է, այն խիստ հողմահարված է, չափերն են՝ 119×93×30×23։ Հիշատակագրությունը մեկ տողով փորագրված է կոթողի քիվին, իսկ հարավային կողին ունի տասներեք տող արձանագրություն։ Այն անթվակիր է և հրատարակվում է առաջին անգամ. «ԽԱՉՍ [ՏԵՐ]ՈՒՆԱԿԱՆ ԱՒԳՆԱԿԱՆ ՊԱՐՈՆ ՎԱՉ/ԷԻ ԱՄԷՆ/ԶՔՈՒՔԻԿ ՎԱՐ/ԴՊԵՏ ԿԱՉՄՈ/Ղ ՍԲ ՆՇԱՆ/ԻՍ, ՅԱՂ/ԱՒԹՍ ՅԻՇԵՑ/ԷՔ ԵՐ/ԱՇ Զ/ՁՅԶ ՅԻՇԷ»։

Տվյալ ժամանակաշրջանում Վաչե անունով իշխան Արագածոտնում վկայված է երկու անգամ։ Մեկը՝ Վաչուտյան Սարգսի որդին, որն իր անբասիր ծառայության համար Զաքարեի կողմից նշանակվել է իշխանաց իշխան, և նրա իշխանությունը տարածվել է Երասխից մինչև Շիրակ՝ ընդգրկելով Արագածոտնը և Նիգը[34]։ Նա քանիցս հիշատակված է XIII դ. 20—30-ական թվականների վիմական վավերագրերում (Սաղմոսավանք, Հովհաննավանք, Սանահին և այլն)։ Մյուսը՝ Քուրդ Բ Անբերդցու որդին է, որն ունեցել է կարճատև կյանք։ Մեր համոզմամբ կոթողը վերաբերում է Վաչե Վաչուտյան մեծ իշխանին։ Այս արձանագրության նշանակությունը առանձնապես կարևոր է, քանի որ հաղորդում է միջնադարի ևս մեկ խաչքար կերտող քարդործ-վարպետի՝ Քուքիկի անունը։ Գավթի փլատակների մեջ ընկած են բազմաթիվ շինաքարեր, որոնցից մի քանիսն ունեն արձանագրություններ։ Սրանցից երկուսը կամարի քարեր են և ունեն նվիրատվական բովանդակությամբ վավերագրեր։ Ցավոք, թերի են և հրատարակվում են առաջին անգամ։ Ահա դրանցից մեկը. «ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ ՀԱՍԱՆ ԵՒ ԵՂԲԱՅՐ/ԻՄ ԽՈՒՐԹՍ՝ ՈՐԴԻՔ ՍԱՐԳՍԻ Ք/ԵՂՈՒՏԵՆՅ ՄԻԱԲԱՆԵ/ՅԱՔ ՍԲ ՁԱՒՐԱՎԱՐԻՍ/ԵՒ ԳՆԵՑԱՔ ԶԴԱՐԵՆ ՀՈՂՆ/ՅՈՐԴՈ ՍԱՀՄԱՆԵՑԱՆ Ի /ՏԱՐԻՆ...Ռ։ ՍՊ ԳՆԵ/ՅԱՔ ԱՅԳԻՆ ՏՎԱՔ Ի ՍԲ ՁԱՒՐԱՎԱՐԻՍ ՄԻԱԲԱՆ/ՔՍ ԽՈՍՏԱՅԱՆ Ի ՏԱՐԻՆ։ Ը։ ԱՒՐ ԺԱՄ Ի ՏԱՒՆԻՆ/ ՏՆԸՆԴԱՌԱՋԻՆ։Բ։ՀԱՍԱՆԱ,։Բ։ԽՈՒՐԹ/ԻՆ։Բ։ՆՈՒՐԻՃԱՆԻՆ, ։Բ։ԽՈՒԹԼՈՒ ԽԱ-ԹՈՒՆԻՆ, ։Ա։ԱՒԷՏԵՆՅ/Ն, ՈՎ ԽԱՓԱՆԷ /ԴԱՏԻ ԱՅԱ»։ Հաջորդ արձանագրությունը փորագրված է գավթի արևելյան պատին, ներսի կողմում, կամարաձև խորշի հյուսիսային երեսին։ Այն տասներկու տող է։ Ցավոք, խիստ հողմահարված է և մասամբ է վերծանվում. «...ՇՆՈՐՀԻՒՆ ԱՅ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԵ/...Ս. ՇՆՈՀ... ԵՒ Ա...[ԳՈՀԱՐ]ՏԻԿԻՆ ՄԻԱԲ/ԱՆԵՑԱՔ ՍԲ ՁԱՒՐԱՒԱՐԻՍ/...ՆԱՓՈՐՏ ՈՐ Զ.../.../...ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ԽՈՍՏԱ/ՅԱՆ Ա ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՒՆԻ ՎԱՐԴԱՎԱ-ՌԻՆ ՅԱՆՈՒՆ/ԳՈՀԱՐ ՏԻԿՆԱ/ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ»։

---

31 Հովհ. Շահխաթունյան, էջ 123։

32 «Ես Աղբուղայ, որդի Իւանէի, որդւոյն մեծին Շահնշահի, ես Աղբուղայ թոռի զՓարպոյ այգեաց չարիատ..., թվ ՉԺԳ/1264/ (Կ. Կոսյանեանց, նշվ. աշխ., էջ 107)։

33 Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1943, էջ 83, 90։

34 Տե՛ս Պատմագրութիւն Զաքարիա Սարկավագի, հ. 3, էջ 12։

Նույն կամարակապ խորշի վերևում փորագրված է երեք տողից բաղկացած արձանագրություն, ըստ որի, վանքին է տրվել մի շինական։ Վկայագրի սկիզբը չի պահպանվել, որոշ մասերը եղծված են և չեն վերականգնվում. «...ԱՇԽԱՐՀԻ ԵՒ ՏՈՒԱՔ ՇԻՆԱԿԱՆ ՅԱՐ.../ԱՄԵՆ ԿԻՐԱԿԻ ՊԱՏԱՐԱԳ ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻ, ԹՎԻՆ ՉԵ (1256)»։

Գավթի արևմտյան պատին փորագրված է ինը տողանի արձանագրություն, որը եզերող քարերը չկան և դժվար է վերականգնել. «ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ ՇԱՀԱԲ ԱՂ.../ԳԻՍ ԱՒՐԱՆԲԵԿՍ ՄԻԱԲԱՆ/ԵՑԱ ՍԲ ՉԱՒՐԱՎԱՐԻՍ ԵՒ ՏՎԱՔ /Ի.../ԿԱՆ ԵՒ ՍՈՔԱ ԽՈՍՏԱՅԱՆ.../ԺԱՄ ՓՈՔՐ ՏԻԿՆԱՒՆ ՈՐ ԿԻՐԱԿԻ.../ՇԱՀՆ ԵՒ ԴԱՆԷԼԻՆ ԵՒ ԱՍԻԼՆ ՄԻԱԲԱՆՔՍ ՍՐԲՈՅԱՐԱՆԻ ՏԱՐԵՆ։ Գ։ ԴԵԿԱՆ ԽՈՍՏԱՅԱՆ Ս...»։ Այս վկայագիրը թերի լինելու պատճառով, դժվար է վերջնական խոսք ասել, սակայն անառարկելի է արձանագրության կարևորությունը, ուր նշված է տվյալ տարածքի վարչական պաշտոնյան/շահար/[35], որի անվան սկզբնատառերն են պահպանվել։

Գավթի արևմտյան պատի տակ ընկած է փորագրված քար՝ ինը տողանի արձանագրությամբ, որի սկիզբը չի պահպանվել.,...ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՀԱՍՏԱ/ՏԵՑԻՆ Ի ՏԱՐԻՆ։Զ։/ԺԱՄ ՏԱՒՆԻ ՍԲ ՅԱ/ԿՈԲԱՅ։Բ։ԱՒՐ Ի/ՆՁ։Բ։ԻՄ ՀԱՒՐՆ/ՍԱՐԳՍԻ։Բ։ԻՄ/ՄԱՒՐՆ ԾԱՄԿԱՆ/ՈՎ ԽԱՓԱՆԷ ԴԱՏԻ ՅԱՅ»։ Գավթի արևմտյան մուտքի ձախակողմն խոշոր տառերով պահպանվել է արձանագրության հետևյալ հատվածը. «ՏՐ ԱՇ ՅԱՒԻՏԵՆԻՑ»։

Այսպիսով, Ուշիի ս. Սարգսի վանքում հայտնաբերված վիմագիր արձանագրությունները մեծ արժեք են ներկայացնում միջնադարյան Հայաստանի կրթամշակութային այս օջախի անցյալը ուսումնասիրելու առումով։ Վիմական տեքստերի վերծանմամբ բացահայտվել են XIII—XIV դդ. ցարդ անծանոթ պատմական անուններ, որոնք գործել են մասնավորապես Նիգ և Արագածոտն գավառներում։

Կարծում ենք, ս. Սարգիս վանքում անհրաժեշտ է ձեռնարկել հնագիտական պեղումներ, որոնց ընթացքում, անտարակույս, ի հայտ են գալու նորանոր վիմագրեր, որոնք լուսաբանելու են հիշյալ տարածքի պատմության ստվերոտ էջերը։

ЛАПИДАРНЫЕ НАДПИСИ МОНАСТЫРЯ СВ. САРГИСА В УШИ

Р. Р. ГАСПАРЯН

Резюме

Обнаруженные на территории монастыря св. Саргиса села Уши лапидарные надписи представляют большую ценность в плане изучения исторического прошлого этого культурно-образовательного очага средневековой Армении. В результате дешифровок эпиграфических текстов выявлены новые имена исторических деятелей XIII—XIV вв., в частности, в гаварах Ниг и Арагацотн.

В ряде надписей зафиксированы лингвистические особенности среднеармянского языка.

---

35 Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ, էջ 458։